ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

ԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

Ն Ա Խ Ա Գ Ա Հ

ք. Երևան «19» հունիսի 2013 թ.

Հ Ր Ա Մ Ա Ն № 16 Ա/Ք

ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՁԵՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թ. հոկտեմբերի 18-ի N 1269-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի կանոնադրության» 12-րդ կետի 4-րդ ենթակետը

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ

1. Հաստատել գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման (ենթակառուցվածքի պահպանման ու զարգացման, ազգային արժեք ներկայացնող գիտական օբյեկտների պահպանման) ծրագրի իրականացման համար պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին պայմանագրի գինը փոփոխելու վերաբերյալ համաձայնագրի ձևը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահում եմ ինձ:

Ս. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված
ՀՀ ԿԳՆ ԳՊԿ նախագահի
2013 թ. հունիսի 19-ի
N 16 Ա/Ք հրամանի

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N _____

ք. Երևան «____ » _____ 20.. թ.

ՀՀ ԿԳ նախարարության գիտության պետական կոմիտեն (այսուհետ՝ Կոմիտե), ի դեմս Կոմիտեի նախագահ Ս. Հարությունյանի, որը գործում է Կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և _____ ը,
(կազմակերպության անվանում)
(այսուհետ՝ Կազմակերպություն), ի դեմս տնօրեն (ռեկտոր) _____ ի,
(անուն, ազգանուն)
որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ Կողմեր), ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության 20.. թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Հիմք ընդունելով Կողմերի միջև «____» _____ 20.. թ. կնքված գիտական և գիտատեխնիկական բազային ֆինանսավորման (ենթակառուցվածքի պահպանման ու զարգացման, ազգային արժեք ներկայացնող գործունեության գիտական օբյեկտների պահպանման) ծրագրի իրականացման համար պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին N_____ պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 3.1 կետը, փոփոխել ծրագրի ֆինանսավորման չափը, որի արդյունքում Պայմանագրի ճշտված տարեկան գինը կկազմի _____ (_____) ՀՀ դրամ:
(թվերով) *(բառերով)*

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.3 Համաձայնագրում Կողմերի չնշված պարտավորությունները թողնվում են անփոփոխ:

2.4 Համաձայնագիրը կնքվում է երկու օրինակով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է Համաձայնագրի մեկ օրինակ:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտե

ք. Երևան, Օրբելի եղբայրների 22

թիվ 1 գանձապետարան

Հ/հ 900011033033

Նախագահ՝ Ս. Հարությունյան

_____
(ստորագրություն)

Կ. Տ.

_____
(կազմակերպության անվանում)

_____
(հասցե)

_____
(բանկային վավերապայման)

Տնօրեն (ռեկտոր)՝ _____
(անուն ազգանուն)

_____
(ստորագրություն)

Կ. Տ.